ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-402[1]-11.10.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի 22-րդ հոդվածի 10.1-ին մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2023 թվականի հուլիսի 1-ն է կամ դրանից հետո:

~~ՆԱԽԱԳԻԾ~~ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

(Կ-402[1]-11.10.2022-ՏՀ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» **ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի 22-րդ հոդվածի 10.1-ին մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2023 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ն է կամ դրանից հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-402-11.10.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հոդված 3.

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ					
1.	**Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյան**	**8-րդ հոդված**	Առաջարկվում է սահմանել, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձերը եկամտային հարկով ընդհանուր սահմանված կարգով հարկելու՝ նախագծով առաջարկվող կարգավորումներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածում են լրացվել են նոր 2-րդ և 3-րդ մասեր: Միաժամանակ, նշյալ առաջարկությամբ պայմանավորված փոփոխություններ են կատարվել նաև «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» **օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդվածում:**	**Ընդունվել է:**
2.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկ-տեմբերի 4-ի» բառերը փոխարինել «2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության» բառերով:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
3.	**ՀՀ կառավարություն**	**8-րդ հոդված**	Հաշվի առնելով նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում տեղ գտած վրիպակը՝ առաջարկվում է նշյալ կետը շարադրել հետևյալ	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			խմբագրությամբ. «ձեռք բերված՝ սույն մասի 2-րդ և 3-րդ կետերում չնշված ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) օտարման դեպքում՝ դրանց հաշվեկշռային արժեքի մասով,»		
«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿ					
	Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյան	**2-րդ հոդված**	Առաջարկվում է սահմանել, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձերը եկամտային հարկով ընդհանուր սահմանված կարգով հարկելու՝ նախագծով առաջարկվող կարգավորումներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**